



# Armenian Church Of Our Saviour

Ս. ՓՐԿԻԶ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ, ՈՒՍՏՐԻ

Rev. Father Aved Terzian  
Pastor

Ապրիլ 12, 1989

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան, Առաջնորդ  
Հայաստանեայց Եկեղեցւոյ Ամերիկայի  
նիւ Եօրք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Սուրբ Փրկիչ Եկեղեցւոյս տարեկան ծխական ժողովը գումարուեցաւ  
Կիրակի, Փետրուար 26, 1989 յաւարտ արարողութեանց ժամը 10:45ին 103  
տրատու անդամներու մասնակցութեամբ: Զուէարկութեան մասնակցեցան 163  
տրատու անդամներ: Եկեղեցւոյս տրատու անդամներուն թիւն է 544:

Օրինաւոր կերպով կատարուեցաւ ծխական խորհուրդի, Թեմական Պատգամա-  
ւորներու, Ընտրողական Յանձնախմբի եւ Հաշուքննիչ Յանձնախումբի ընտրութիւն-  
ները: Ծխական խորհուրդին վերընտրուեցան Տիարք Չարլս Շարուկեան՝ 115՝ եւ  
Արթըր Սրապեան՝ 147՝. իսկ նորընտիր անդամներն են Տիարք Սթիվըն ծորճորեան  
111, Բիչրրտ Մէքսեան՝ 117՝ եւ Ճան Մրզիկեան կտր.՝ 120: Յաջորդ առաւել-  
ագոյն քուէ ստացած անձն է Պրն. Ճան Սաղարեան՝ 83:

Համաձայն Առաջնորդարանէն ստացած մեր ուղղութեան, հաճեցէք նաեւ  
ներփակ գտնել Եկեղեցւոյս Տեղեկագիրներու Պրակը, Անդամական ժողովին Ատենա-  
գրութիւնը, քուէարկութեան համարեա արդիւնքը, Եկեղեցւոյս ընդհանուր ելեւ-  
մտական հաշուետուութիւնը եւ Առաջնորդարանէն ղրկուած հարցարանը՝ պատասխանուած:

Յանձնելով վերոյիշեալ գրութիւնները Ձերդ Բարձր նկատողութեան եւ  
կը սպասենք ընտրութեանց վաւերացման:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս. Աջոյն

Ի դիմաց ծխական Անդամական ժողովին

Խոնարհաբար

*Նիկոլ Քիչի Գրիգորեան*

Տ. Աւետ Բահանայ Թէրզեան

նախագահ

